

## **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 35/3**

**22 նոյեմբերի 2016թ.**

Քննարկվեց Աստղիկ Զանիկյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 23.09.2016թ. թիվ 331767/01 որոշման դեմ:

#### **Աստղիկ Զանիկյանի գանգատում բերված փաստարկները.**

Աստղիկ Զանիկյանը հայտնում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 19.09.2016թ. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասի համաձայն իրավիճակ է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման և գործի վարույթին մասնակցելու համար:

Որից հետո, 23.09.2016թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետը կայացրել է թիվ 331767/01 որոշումը, համաձայն որի Աստղիկ Կարենի Զանիկյանին նշանակվել է վարչակառուցում 20.000 դրամի չափով:

Աստղիկ Զանիկյանը հայտնում է նաև, որ «ՍՏԵՓԱՆՍ ՍԱՆ» ՍՊԸ և «ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» ՍՊԸ-ները դադարեցրել են իրենց գործունեությունը 01.07.2015թ.-ից անորոշ ժամկետով: Աստղիկ Զանիկյանը հանդիսանալով վերը նշված երկու ՍՊԸ-ների տնօրենը 01.07.2015-ից չի աշխատում և երկու ՍՊԸ-ներում էլ չկան գրանցված աշխատողներ առ 01.07.2015թ., սակայն շարունակ, իր մշտական բնակության վայրի հասցեով՝ ք.Երևան, Գ.Շերամի 105շ., բն. 23, ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի կողմից ուղարկվում են վարչական վարույթի վերաբերյալ ծանուցագրեր և վարչական իրավախախտումների վերաբերյալ որոշումներ, ընդ որում վարչական վարույթի վերաբերյալ ծանուցագրերը ստանում է ծանուցագրերում նշված օրվանից ուշ: Այդպիսով, փաստորեն խախտվում է իր օրենքով լսված լինելու, վարույթին մասնակցելու իրավունքը: Բացի այդ, ծանուցագրում նշված «Աստղիկ Ստեփանի Զանիկյան» անձը Աստղիկ Կարենի Զանիկյանի հետ որևէ կապ չունի:

Ելնելով վերոգրյալից՝ Աստղիկ Զանիկյանը խնդրում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի սահմաններում անվավեր ճանաչել և վերացնել իրեն ուղարկված բոլոր որոշումների հետևանքները:

#### **ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետը, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 4682 գործը և ուսումնասիրելով վարչական իրավախախտման վերաբերյալ 19.09.2016թ. թիվ 4682 արձանագրությունը պարզել է, որ «ՍՏԵՓԱՆՍ ՍԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն Աստղիկ Զանիկյանը «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2016թ. հունիս ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկը: Նկատի

ունենալով, որ արարքը նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի կողմից 23.09.2016թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 331767/01 որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում), որով Աստղիկ Զանիկյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամի չափով:

Տվյալ դեպքում, ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների Աննա Երիցյանը 08.01.2013թ-ին «ՍՏԵՓԱՆՍ ՍԱՆ» ՍՊԸ-ում նշանակվել է տնօրենի տեղակալի, իրավաբանի պաշտոնին, սակայն վերջինիս պաշտոնից ազատվելու վերաբերյալ «Վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի գրանցման հայտ» հարկային մարմին չի ներկայացվել: Նման պայմաններում «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում «ՍՏԵՓԱՆՍ ՍԱՆ» ՍՊԸ կողմից պետք է ներկայացվեր 2016թ. հունիս ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկը, ինչը, սակայն, չի ներկայացվել: Ընդ որում, 2016թ. հունվարից մինչև մայիս ամիսն ընկած ժամանակահատվածում ընկերության կողմից սահմանված կարգով ներկայացվել են եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկները:

Քննարկվող դեպքում «ՍՏԵՓԱՆՍ ՍԱՆ» ՍՊԸ տնօրեն Աստղիկ Զանիկյանի կողմից խախտվել են «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթները, որի համար կիրառվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության միջոցը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 23.09.2016թ. թիվ 331767/01 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ